Բուն վանքն ընկնում է բակի հյուսիսային կողմը, իսկ արևմուտքից և հարավից միաբանների խցերն էին. հարավային դարբասի մոտ, աղբյուրի վերա, շինված է մի փոքրիկ մատուռ։ Տարաբաղդաբար փչացրել ենք մեր լուսանկարը և հնարավորություն չունինք վանքի ընդհանուր տեսարանի մասին գաղափար տալ*։

Պարսպից դուրս՝ հյուսիս—արևմտյան անկյունում՝ գերեզմանատունն է, հասարակ և փոքր խաչքարերով. դռցանից հնագույնը 1296 թիվն է կրում.

Ես Յակոբ մեղ ... [աւոր] / քահ. կանգնեցի զխաչս ի / [փրկութիւն] . .. (յերկու տող չի կարդացվում) / աղաւթս ... (մի բառ) թվ. ՉԽԵ.»։ Մի ուրիշ խաչքար ունի «ի թվ. ՉԾԱ» թվականը առանց արձանագրության։ Վանքի արևելյա—հյուսիսային կողմը, պարսպից դուրս, բլրի վրա կա պատվանդանով մի խաչքար. ճակատի արձանագրությունը չի կարդացվում, բայց թևերի մոտ գրված է «ՉԾԷ» թվականը։

Գյուղի մեջն է Ս. Գրիգորի յեկեղեցին, որ հիշատակված է № 1500/1511 Հայսմավուրքի հիշատակարանում (Հավել. Բ. 13)՝ «Գեղամիջի սբ Գրիգոր» անունով 1471 թվին, բայց նորոգված է 1669 թվին հետևյալ արձանագրության համաձայն.

Մեք Կուգվայ ժողով/ուրդս շնորհօքն Քսի / շինեցաք սբ Գրիգոր եկղս հայրապետութի։ տն Յակոբայ. Թվ. ռճԺը.

Պռոշյանց նշանավոր կեդրոններից մեկն ել Ածոփա կամ Ոծոփի վանքն եր, բուն Շահապունիքից դուրս, իսկապես Ճահուկի մեջ, Բաղամլվի վտակի վերա, որ Ճահուկի արևելյան ճյուղն է. բայց տեսանք, թե ինչպես 1292 թվի մի հիշատակարան Ոծոպի վանքը Շահապունյաց գավառի մաս է համարում և Պռոշյանց կեդրոններից մեկը, ուրեմն Շահապունիքն ու Ճահուկը մի գավառ հասկանալով։ Վանքը շինված է գյուղի արևելյան կողմը, բերդի հանդեպ, մի բլրի լանջին, արեգակի և անձրևի աղդեցության շուտ յենթարկվող սպիտակ քարից (պատկ. 17)։ Դավրիժեցին** Ածոփն անվանում է «շինյալ ի վաղեմի ժամանակաց վանք», բայց արձանագրությունները համեմատաբար նոր են, ինչպես և շենքը, ԺԶ. դարու գործ։ Դավրիժեցին այս հանգամանքներին անծանոթ լինել չեր կարող, քանի որ Վրդանես յեպիսկոպոս Ոծոպեցու ավանդությունը նա քաղել է Շահապունյաց ձորում և մերձակա վանքերում, բայց յեթե «շինեալ ի վաղեմի ժամանակաց վանք» է անվանում, ճարտարապետական հնությունը ի նկատի չունի, այլ վանքի հաստատությունը։ Հնության շատ հետքեր մնացել յեն և ներկա շենքի վրա. բազմաթիվ քարեր, նույն իսկ քանդակներով և արձանագրություններով, հին վանքի մնացորդներից, գործադրվել են նոր շենքի մեջ։ Պռոշյանց անվան անմիջական յիշատակությամբ արձանագրություններ չունինք այժմ վոչ այստեղ և վոչ գյուղի յեկեղեցում, բայց մի շարք պարոն կամ բեկ տիտղոսներով նվիրատուների կամ հանգուցյալների հիշատակությունը հիմք է տալիս մեզ հավանական յենթադրություն անելու, թե նոքա Պռոշյան ծագում ունին, քանի որ Մարտիրոս և Ածոփ գյուղերը նույն տոհմի անմիջական տիրապետության վայրեր եյին։

Վասակ Խաղբակյանի Արատեսում թողած արձագրության մեջ, ինչպես տեսանք, նոր իշխանության սահմաններն եյին «ի Գառնոյ ի Բարգուշատ». Գառնիյում կամ Կոտայքում Պռոշյանց հայտնի կեդրոնը յեղել է Այրի կամ Գեղարդա վանքը. բայց այդ վանքը յուր սահմաններով Վասակ Խաղբակյանի իշխանության մեջ չեր մտնում, այլ գնված է հետոյ՝ նորա որդու Պռոշ մեծ իշխանի ձեռքով, նույն վանքում թողած մեծ արձանագրության համեմատ. «զանձագին արարի ի տերանց աշխարհիս (Իվանեի կամ Ավագի տան) սուրբ ուխտս Այրիվանից լերամբ եւ դաշտաւ եւ ամենայն կազմութեամբ»։ Յեվ հիրավի Իվանե աթաբեգը յուր արձանագրության մեջ նույն վանքում հայտնում է, թե «տեսի զեկեղեցիքս եւ զսրբս եւ ինձ անոշ թուեցաւ, յիմ անուն արարի, զիմ յիշատակս ի վերայ գրեցի» (Հավել. Ա. 2)։ Այստեղից պարզ է, որ Վասակի «ի Գառնոյ ի Բարգուշատ» խոսքերի մեջ Գեղարդի վանքը չեր ընկնում. մատենագրական տեղեկություններ ել չունինք մեր բանասիրության մեջ, թե Պռոշյանք բացի Գեղարդից որ և է կալված ունեցած լինին Գառնիում կամ Ազատ գետի հովտում։ Այս պակասը լրացնում և Վասակի միտքը պարզում են արձանագրություններն ու շինարարական մնացորդները, որոնք դեռ ևս հարկավոր ուշադրության չեն արժանացել և արդեն մոտ են քայքայման ու վերջնական կորստյան։

Ազատ գետը բաղկացած է յերկու մեծ վտակից. դռցանից առաջինը հոսում է Գեղարդա վանքի ձորով, իսկ յերկրորդ ավելի մեծ վտակը Քեղվա ձորով, որ այժմ Միլի չայ է կոչվում։ Գեղարդա և Միլի չայի մեջ ընկնում է մի լեռնագոտի, որ յերկու վտակների խառնարանների մոտից հետզհետե լայնանում է և բարձրանում դեպի արևելք՝ Գեղարքունյաց բարձունքները. որքան ահագնատեսիլ են, տեղ տեղ, գրեթե, ուղղահայաց կախված ձորի վերայ այդ սարի հյուսիսային կողերը, նույնչափ գեղատեսիլ և ակնապարար հարաւային կողերը, որ աստիճանաբար իջնում են դեպի Միլի չայը և մի սիրուն ձորագոգ կազմում։ Սորա հյուսիսային լանջին է ընկած Աղջոց Ս. Ստեփանոսի վանքը (պատկ. 19), բաղկացած բուն տաճարից, գավթից, որի հյուսիսային պատն է միայն մնացած, և Պողոս-Պետրոսի փոքրիկ յեկեղեցուց։ Վանքը հիմնված է ըստ ավանդության Լուսավորչի ձեռքով,

* Տես. Սմբատեանի լուսանկարների ժողովածուն։

** Պատմ. Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ. Բ. տպ. Վաղարշապատ, 1896. յեր. 427։